Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 17-ի N 1410 - Ն որոշման

«Ձև ՎԽ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	**Հարցը**	**Այո**	**Ոչ**	**Չ/Պ**	**Կշիռը**	**Ստուգման մեթոդը**	**Մեկնաբանու-թյուններ**	**Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**
1.	Արդյո՞ք կազմակերպիչը (բացառությամբ տոտալիզատորի կազմակերպման դեպքերի) ապահովել է խաղարկությանը մասնակցող տոմսերի ընդհանուր արժեքի առնվազն կեսի չափով շահումային ֆոնդի (առանց դրանում ներառվող վիճակախաղի տոմսերի արժեքի) ձևավորումն ու մասնակիցների միջև բաշխումը:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ
2.	Արդյո՞ք կազմակերպիչը նախքան վիճակախաղերի վերաբերյալ գովազդների հրապարակումը դրա բովանդակությունը համաձայնեցրել է լիազոր մարմնի հետ:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ
2.1.	Արդյո՞ք վիճակախաղի կազմակերպիչն իրականացրել է վիճակախաղի (այդ թվում՝ տոտալիզատորի) կամ դրանց կազմակերպիչների ցանկացած տեսակի գովազդ, բացառությամբ իր պաշտոնական կայքի կամ տոտալիզատորի (խաղասրահի, բուքմեյքերական կետի) շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաև առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան				1	Տեսողական, Փաստաթղթային		«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մաս

	որակավորման պահանջներին և չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների:							
3.	Արդյո՞ք կազմակերպիչն իրային շահումների խաղարկման դեպքում վիճակախաղի շահող մասնակցին տեղեկացրել է այդ իրային շահումին համարժեք դրամական չափի մասին և շահողի ցանկությամբ տրամադրել դրամական շահումը:				2	Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ
4.	Արդյո՞ք կազմակերպիչը խաղարկությամբ կամ համակցված վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով սահմանված ժամկետներում չպահանջված (չստացված) շահումների չափով ավելացրել է այդ ժամկետի ավարտին հաջորդող հերթական խաղարկության շահումային ֆոնդը:				2	Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ
5.	Արդյո՞ք կազմակերպիչը շահումի փաստը և արժեքը հրապարակել է միայն շահողի համաձայնությամբ, բացառությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:				2	Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ
6.	Արդյո՞ք կազմակերպիչը շահողի առաջին իսկ պահանջով տրամադրել է շահումը:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետ
7.	Արդյո՞ք կազմակերպիչը համապատասխան լիցենզիայի հիման վրա ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման, ծրագրային ապահովման (ներառյալ շահումի գործակիցների որոշման և իրացման ծառայությունները) և դրանց սպասարկման ծառայությունների մատուցման գործունեություններով, կազմակերպչի աշխատակիցների համար և խաղասրահներում հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ, ինչպես նաև վիճակախաղերի կազմակերպման, տոմսերի իրացման, պատրաստման և (կամ) ներմուծման գործունեություններից բացի չի զբաղվել այլ գործունեությամբ:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետ

8.	Արդյո՞ք կազմակերպիչը վիճակախաղերը կազմակերպել է իր կողմից սահմանված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետ
9.	Արդյո՞ք կազմակերպիչը լիազոր մարմնի սահմանած կարգով ստուգում է խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձանց անձը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև տոտալիզատորին մասնակցությունը սահմանափակող՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հանգամանքը:				2			«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետ
10.	Արդյո՞ք կազմակերպիչը մինչև ֆիզիկական անձանց ինտերնետային կայքում գրանցելը՝ իրականացնում է ինտերնետ տոտալիզատորին մասնակցել ցանկացող ֆիզիկական անձանց ինքնության ստուգում (նույնականացում)՝ բացառելով քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձանց մասնակցությունը ինտերնետ տոտալիզատորին:				2			«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետ, ՀՀ ֆի-նանսների նախարարի 2020 թվականի մայիսի 5-ի N 128-Ն հրամանի հավելվածով սահմանված կարգի 8-րդ կետ
11.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից կազմակերպված վիճակախաղերին չեն մասնակցել մինչև 18 տարեկան անձինք, բացառությամբ տոտալիզատորի, որին մասնակցելու իրավունք ունեն միայն 21 տարեկանը լրացած անձինք:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մաս
12.	Արդյո՞ք ոչ խաղարկությամբ վիճակախաղի կազմակերպիչը վիճակախաղերի տոմսերի իրացման գործընթացն սկսվելուց հետո յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել է տվյալ վիճակախաղի արդյունքները՝ նշելով վիճակախաղի անվանումը և տվյալ վիճակախաղի շահած տոմսերի մասին տվյալները՝ ըստ համարների (սերիաների) և շահումների չափերի:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մաս
13.	Արդյո՞ք խաղարկությամբ կամ համակցված վիճակախաղի կազմակերպիչը յուրաքանչյուր խաղարկության անցկացումից հետո հնգօրյա ժամկետում http://www.azdarar.am հասցեում				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մաս

	գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել է տվյալ վիճակախաղի խաղարկության արդյունքները՝ նշելով վիճակախաղի անվանումը, խաղարկության համարը և տվյալ վիճակախաղի շահած տոմսերի մասին տվյալները՝ ըստ շահումի փուլերի, տոմսերի համարների (սերիաների) և շահումների չափերի:							
14.	Արդյո՞ք կազմակերպիչը լիազոր մարմնի կողմից ուղարկված դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի էլեկտրոնային կամ պատճենահանված օրինակը ստանալուց հետո արգելել է մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձի մուտքը խաղասրահներ, ինչպես նաև գրանցումը ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված ինտերնետային կայքում, իսկ գրանցված լինելու դեպքում՝ ինտերնետ տոտալիզատորին մասնակցելու հնարավորությունը:				2			«Վիճակախաղերի մասին» օրենքի 5.1-ին հոդվածի 2-րդ մաս
15.	Արդյո՞ք լիցենզիա ունեցող վիճակախաղի կամ անմիջականորեն տոտալիզատորի կազմակերպիչը կազմակերպել է մեկական բուքմեյքերական գրասենյակ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատոր միայն Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում, Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում, Հայաստանի Հանրապետության մարզերի յուրաքանչյուր վարչական կենտրոնում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում, և պահպանված են սույն ստուգաթերթի 15.1-15.4-րդ ենթակետերում նշված պահանջները:				1			«Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշում
15.1.	Բուքմեյքերական գրասենյակը կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորը կազմակերպված է միայն շինությունում, զբաղեցրած է շինությունն				1	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման 3-րդ կետ

	ամբողջությամբ կամ զբաղեցրել է այդ շինության մեջ առանձնացված մեկ միասնական ոչ բնակելի տարածքը:							
15.2.	Բուքմեյքերական գրասենյակը կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորը կազմակերպված է միայն այն շինությունում, որը Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում՝ ուղիղ գծով առնվազն 150 մետր, Կոտայքի մարզի վարչական կենտրոնում և Ծաղկաձորի համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի վարչական կենտրոնում և Սևանի համայնքի վարչական սահմաններում, Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերի վարչական կենտրոններում՝ ուղիղ գծով առնվազն 100 մետր, իսկ Վայոց ձորի մարզի վարչական կենտրոնում և Ջերմուկի համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի վարչական կենտրոնում և Մեղրի համայնքի վարչական սահմաններում և Տավուշի մարզի վարչական կենտրոնում՝ ուղիղ գծով առնվազն 50 մետր հեռու է կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցների տարածքներից:				1	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետ
15.3.	Վիճակախաղի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված շենք-շինությունների՝ խաղասրահների, բուքմեյքերական գրասենյակների յուրաքանչյուր սպասարկման սրահի ընդհանուր մակերեսը չի գերազանցում 200 քառակուսի մետրը. Վիճակախաղի կազմակերպչի կողմից ապահովված է նաև առնվազն նախասրահի, դրամարկղի, սանհանգույցի առկայությունը:				1	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետ
15.4.	Բուքմեյքերական գրասենյակը կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորը կազմակերպված է միայն այն շինությունում, որի նախասրահը գտնվում է խաղասրահի կամ բուքմեյքերական գրասենյակի հիմնական մուտքին հարակից առանձնացված սրահում, որտեղ իրականացվում է հաճախորդների նույնականացումը՝ բացառելով քսանմեկ տարին (վիճակախաղի դեպքում՝				1	Տեսողական, Փաստաթղթային		ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1531-Ն որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետ

	տասնութ տարին) չլրացած ֆիզիկական անձանց և լիազոր մարմնի կողմից տրամադրված՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձանց մուտքը խաղասրահ կամ բուքմեյքերական գրասենյակ:							
16.	Արդյո՞ք կազմակերպիչը տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել և ելքագրել է անկանխիկ եղանակով կամ արդյո՞ք անմիջականորեն (խաղասրահի միջոցով) խաղացողների կողմից կատարվող խաղադրույքների կատարումը կամ կազմակերպիչների կողմից խաղացողներին տրված անհատական խաղային քարտերին դրամական միջոցների համալրումն իրականացվում է անկանխիկ եղանակով:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մաս
17.	Արդյո՞ք կազմակերպիչը Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմատացված սարքավորումների միջոցով չի իրականացնում վիճակախաղի՝ ոչ խաղարկությունով, խաղարկությունով, համակցված, տոտալիզատորի (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպում:				2	Տեսողական		«Վիճակախաղերի մասին» օրենքի 5.2-րդ հոդվածի 3-րդ մաս
17.1.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից անկանխիկ գործարքներն իրականացվում են միայն բանկային հաշիվների կամ քարտերի միջոցով				1	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 5.2-րդ հոդվածի 4-րդ մաս
18.	Արդյո՞ք խաղարկությամբ կամ համակցված վիճակախաղի դեպքում վիճակախաղի կազմակերպչի կողմից ստեղծված՝ վիճակախաղի չիրացված տոմսերի հաշվառման, մարման և պահպանման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) մասնակցությամբ վիճակախաղի չիրացված տոմսերը հաշվառվել, մարվել և պահպանվել են հերթական խաղարկության անցկացումից առաջ և թողարկված՝ վաճառված և մարված վիճակախաղի տոմսերի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է վերահսկող մարմնին խաղարկության անցկացումից ոչ շուտ, քան 4 ժամ առաջ, բայց ոչ ուշ, քան 3 ժամ առաջ:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ, ՀՀ կառավարության 2004 թ. փետրվարի 12-ի N 288-Ն որոշման 7-րդ հավելվածի 2-րդ կետ

19.	Արդյո՞ք ոչ խաղարկությամբ վիճակախաղի դեպքում հանձնաժողովի մասնակցությամբ չիրացված տոմսերը հաշվառվել, մարվել և պահպանվել են վիճակախաղի գործունեությունն ավարտելու մասին առնվազն 3000 օրինակ տպաքանակ ունեցող թերթում հայտարարության հրապարակումից հետո մեկ շաբաթվա ընթացքում:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ
20.	Արդյո՞ք հանձնաժողովի անդամների կողմից մարվել են չիրացված տոմսերը՝ դակելով կամ կտրելով դրանց անկյունը՝ այնպես, որ չեն վնասվել տոմսի համարը, սերիան, խաղարկության համարը և խաղարկությանը մասնակցող դաշտերը:				2	Տեսողական		«Վիճակախաղերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մաս
21.	Արդյո՞ք հանձնաժողովը կազմել է վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին տեղեկանք՝ առնվազն երկու օրինակից, որտեղ նշված են տվյալ վիճակախաղի անվանումը, խաղարկության համարը, պահպանման ենթակա վիճակախաղի մարված տոմսերը՝ ըստ սերիաների, համարների և դրանց ընդհանուր թվի:				2	Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս
22.	Արդյո՞ք վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին կազմված տեղեկանքը ստորագրվել է հանձնաժողովի առնվազն չորս անդամի կողմից:				2	Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մաս
23.	Արդյո՞ք վիճակախաղի մարված և պահպանման ենթակա տոմսերի մասին տեղեկանքի կազմումից հետո մարված տոմսերը տեղադրվել են հատուկ պարկերում կամ ծանրոցներում:				2	Տեսողական		«Վիճակախաղերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մաս
24.	Արդյո՞ք կազմակերպիչը վիճակախաղի մարված տոմսերը պահպանել է պահպանման մասին տեղեկանքի կազմման պահից առնվազն մեկ տարի:				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մաս
25.	Արդյո՞ք տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչները տվյալ ամսվա ընթացքում տոտալիզատորի խաղադրույքների ընդունման կամ անմիջականորեն ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչների թվի կամ ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված				2	Տեսողական, Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3^2-րդ մաս

	ինտերնետային կայքերի գրանցված հասցեների ավելացման դեպքում դրա մասին ավելացումից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ վերահսկող մարմին ներկայացրել են լրացուցիչ հաշվետվություն կամ տեղեկատվություն:							
26.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից վերահսկող մարմին ներկայացված տեղեկություններում (հաշվետվություններում) բացակայել են կեղծ տվյալները:				2	Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ
27.	Արդյո՞ք կազմակերպիչը լիցենզիա ստանալու համար հայտը ներկայացնելիս կամ դրանից հետո՝ մինչև լիցենզիան ստանալու պահը չի խեղաթյուրել պահանջվող տեղեկությունները կամ չի ներկայացրել ոչ լիարժեք տեղեկություններ, որոնց ճիշտ կամ լիարժեք ներկայացնելը կհանգեցներ լիցենզիա ստանալու մասին հայտի մերժմանը:				2	Փաստաթղթային		«Վիճակախաղերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ
28.	Արդյո՞ք կազմակերպիչը, լիցենզիայի վերաձևակերպման համար հիմք հանդիսացող փոփոխություն կատարելիս, իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում տեղեկացրել է լիազոր մարմնին:				2	Փաստաթղթային		«Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մաս
29.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից բացահայտվել և գնահատվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը, և գործում են բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման, զսպման վերահսկման ընթացակարգերը:				1	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդված
30.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:				1	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինան-սավորման դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ և 2-րդ մաս
31.	Արդյո՞ք կազմակերպիչը կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել լիազոր մարմին:				1	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինան-սավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մաս

32.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:				1	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ և 2-րդ մաս
33.	Արդյո՞ք կազմակերպիչը 5 միլիոն դրամը գերազանցող կանխիկ գործարք կատարելու դեպքում դրա մասին լիազոր մարմնին տրամադրել է հաշվետվություն:				1	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թ. հոկտեմբերի 12-ի N 152-Ն որոշում
34.	Արդյո՞ք կազմակերպիչը կատարել է անկանխիկ գործարք կամ 24 ժամվա ընթացքում անկանխիկ գործարքներ, որի (որոնց) գումարը կամ հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը և դրանց մասին լիազոր մարմնին տրամադրել է հաշվետվություն:				1	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թ. հոկտեմբերի 12-ի N 152-Ն որոշում
35.	Արդյո՞ք կազմակերպչի աշխատակիցների և ներկայացուցիչների կողմից ապահովված է հաշվետվությունների կամ այլ տեղեկությունների տրամադրման փաստի մասին գաղտնիությունը:				1	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մաս
36.	Արդյո՞ք կազմակերպչի կողմից կասկածելիության չափանիշների, տիպաբանությունների առկայության դեպքում իրականացված վերլուծության արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու դեպքում դրա հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մաս, 22-րդ հոդվածի 2-րդ մաս

	փաստաթղթավորվում և պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:							
37.	Արդյո՞ք կազմակերպիչը լիցենզիան ստանալուց հետո հաջորդող 1-ամսյա ժամկետում հաշվառվել է լիազոր մարմնում լիազոր մարմնի սահմանած կարգով:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման ևահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մաս
38.	Արդյո՞ք կազմակերպիչը 1 միլիոն դրամը գերազանցող գործարք իրականացնելու դեպքում իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, իսկ լիազորված անձի կամ իրական շահառուի առկայության դեպքում նույնականացրել և ստուգել է վերջիններիս ինքնությունը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 16-րդ հոդված
39.	Արդյո՞ք կազմակերպիչը գործարար հարաբերության ողջ ընթացքում իրականացնում է ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս
40.	Արդյո՞ք կազմակերպիչն առնվազն տարին մեկ անգամ թարմացրել է հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տվյալները:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս
41.	Արդյո՞ք կազմակերպիչը կատարում է առանց առերես շփման գործարքներ կամ հաստատում է առանց առերես շփման գործարար հարաբերություններ, եթե այո, ապա արդյո՞ք ներդրված են դրանցով պայմանավորված հնարավոր և առկա ռիսկերի հակազդման (կառավարման) համապատասխան ընթացակարգերը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մաս
42.	Արդյո՞ք կազմակերպիչը պահպանում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ փաստաթղթերը) գործարար հարաբերության դադարեցումից հետո առնվազն 5 տարի ժամկետով:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր

43.	Արդյո՞ք 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպիչն ունի ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտ:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետ և 23-րդ հոդվածի 1-ին մաս
44.	Արդյո՞ք ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտն առնվազն ներառում է հաճախորդի պատշաճ, այդ թվում՝ հավելյալ և պարզեցված ուսումնասիրության, ներքին դիտարկումների մարմնի գործունեության, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելու, գործարքների և գործարար հարաբերությունների իրականացման մերժման կամ դադարեցման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցման, ներքին դիտարկումների մարմնի և հաճախորդների սպասարկող աշխատակիցների միջև համագործակցության ընթացակարգերը, ներքին դիտարկումների մարմնի և այլ աշխատակիցների աշխատանքի ընդունման, ուսուցման և վերապատրաստման պահանջները, ներքին աուդիտի իրականացման կարգն ու պայմանները, ծառայությունների նոր տեսակների մատուցմամբ, նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչպես նաև առանց առերես շփման գործարքներով կամ գործարար հարաբերություններով պայմանավորված հնարավոր և առկա ռիսկերի հակազդման (կառավարման) համապատասխան ընթացակարգերը, ռիսկերի արդյունավետ կառավարման ընթացակարգերը՝ բարձր ռիսկի չափանիշների առկայությունը պարզելու համար:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայ-քարի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մաս
45.	Արդյո՞ք կազմակերպիչը իրավական ակտերից մեկական օրինակ դրանց հաստատման, ինչպես նաև դրանցում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու դեպքում մեկշաբաթյա ժամկետում տրամադրել է լիազոր մարմնին:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության

								ֆինանսավորման դեմ պայ-քարի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մաս
46.	Արդյո՞ք կազմակերպիչն ունի ներքին դիտարկումների մարմին:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայ-քարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մաս
47.	Արդյո՞ք կազմակերպչի ներքին դիտարկումների մարմնին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են կազմակերպչի կողմից ձեռք բերվող ու պահպանվող տեղեկությունները (ներառյալ փաստաթղթերը):				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայ-քարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մաս
48.	Արդյո՞ք կազմակերպչի ներքին դիտարկումների մարմինն ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է կազմակերպչի, վերջինիս ստորաբաժանումների և աշխատողների գործունեությունը՝ օրենսդրական, ենթաօրենսդրական և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխանության տեսանկյունից և դրա արդյունքների, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել կազմակերպչի իրավասու մարմնին:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայ-քարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մաս
49.	Արդյո՞ք ներքին դիտարկումների մարմինը օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս անկախ է և ունի կազմակերպչի ավագ ղեկավարության կարգավիճակ:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայ-քարի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մաս
50.	Արդյո՞ք 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպիչը լիազոր մարմնի սահմանած դեպքերում և հաճախականությամբ իրականացրել է ներքին աուդիտ՝ օրենքով նախատեսված պարտականությունների և գործառույթների պատշաճ իրականացումը վերստուգելու համար:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետ, 25-րդ հոդվածի 1-ին մաս

51.	Արդյո՞ք 10-ից ավելի աշխատակից ունեցող կազմակերպիչը լիազոր մարմնի սահմանած կարգով, լիազոր մարմնի պահանջով կամ իր նախաձեռնությամբ հրավիրել է արտաքին աուդիտ՝ վերստուգելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետության մակարդակը:				2	Փաստաթղթային		«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ կետ և 25-րդ հոդվածի 2-րդ մաս

1.	«Այո»-առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, պահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները	V			
2.	«Ոչ»-բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ		V		
3.	«Չ/Պ»-չի պահանջվում			V	

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք,
2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք,
3. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք,
4. ՀՀ կառավարության 12.02.2004 թ. N 288-Ն որոշում,
5. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.10.2021 թ. N 152-Ն որոշում,
6. ՀՀ կառավարության 17.09.2020 թ. N 1531-Ն որոշում,
7. ՀՀ ֆինանսների նախարարի 05.05.2020 թ. N 128-Ն հրաման,
8. «Գովազդի մասին» ՀՀ օրենք:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ